

կանութեան (Zoroastrianism), եւայլն..., մինչ ժամանակագրականօրէն աւելի ուշ սկսած, զարգացած ու լայնօրէն տարածուած *Արեւմտեան փիլիսոփայութիւնը* (Western Philosophy) կը ներկայանայ որպէս գիտութիւն: Այս աշխատասիրութեան կամ ուսումնասիրութեան հիմնական բաժնին հիմք պիտի ծառայէ այս վերջինը՝ *Արեւմտեան փիլիսոփայութիւնը*, որ սկսաւ Հին Յունաստանի մէջ եւ տարածուեցաւ նախ Եւրոպայի ապա ամբողջ աշխարհի վրայ:

Արեւմտեան փիլիսոփայութիւնը կը սկսի մ.թ.ա. 6-րդ դարու առաջին կիսուն, ինչպէս յիշուեցաւ, Հին Յունաստանի մէջ եւ որպէս առաջին ներկայացուցիչ, ընդունուած է իմաստասէր **Թալէս Միլէտոսցին** (Thales of Miletus, 625 – 546 մ.թ.ա.), որ Հնադարեան յունական աւանդութեան մէջ եօթը իմաստուններէն մէկն էր: Սակայն փիլիսոփայութիւնը (յուն.՝ philosophía) որպէս եզր, կը գտնենք աւելի ուշ, **Պիլթագորաս Սամոսցիի** (Pythagoras of Samos, 570 – 500 մ.թ.ա.) ժամանակ: Նոյնպէս Պիլթակորասն է, որ ինքզինք առաջին անգամ փիլիսոփայ կոչած է: Իսկ փիլիսոփայութիւնը, որպէս գիտական ճիւղ հաստատուած է, յոյն դասական փիլիսոփայ **Պլատոնի** (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) կողմէ:

Բազմաթիւ լեզուներու մէջ (նոյնիսկ ոչ հնդեւրոպական ընտանիքին պատկանող) կ'օգտագործուի յունական եզրը՝ փիլիսոփայութիւնը, իր զանազան տառադարձութիւններով (Philosophía, Philosophy, Philosophie, Pilosopia, Filosofi, Filozofia, Felsefe, Falsafa ...): Հայերէնի մէջ սակայն, փիլիսոփայութեան կողքին, մենք ունինք նաեւ շքեղ *իմաստասիրութիւն* բառը, որ (ինչպէս նշեցինք) յունարէնի արմատական թարգմանութիւնն է:

Ապա հարց տանք, թէ ի՞նչ է այն **պատճառը**, որ մարդը մղած է՝ դէպի փիլիսոփայութիւն:

Այս հիմնահարցի պատասխանը կը գտնենք յոյն դասական փիլիսոփաներ, **Պլատոնի** եւ իր աշակերտ՝ **Արիստոտէլի** (Aristotle, յուն.՝ Aristotélês, 384 – 324 մ.թ.ա.) մօտ, որոնց համաձայն, փիլիսոփայութիւնը ընդհանրապէս ծագում առած է մարդոց **զարմանքին** եւ **տարակուսանքին** պատճառներով:

Մարդ, միայն իր շրջապատի երեւոյթները նկատելով՝ չէ բաւարարուած, այլեւ հետամուտ եղած է գիտնալու թէ այդ երեւոյթները ի՞նչ պատճառով կան կամ գոյութիւն ունին, եւ այդ երեւոյթներու ետին ի՞նչ ազդու գործօններ կան... կամ մարդ ինչո՞ւ կ'ապրի, ի՞նչ է կեանքին իմաստը, մանաւանդ ապրիլ կեանք մը, ուր մահուան գիտակցութիւնը կայ:

Իսկ եթէ հարց տանք, թէ ինչպէ՞ս կարելի է **բնորոշել** փիլիսոփայութիւնը, դժուարութեան պիտի մատնուինք:

Հնադարեան ժամանակներէն ի վեր, փիլիսոփայութիւնը կրած է իմաստի եւ համակարգի զանազան փոփոխութիւններ: Շատեր փորձած են փիլիսոփայութիւնը բնորոշել կամ նկարագրել: Օրինակ, Պլատոն, փիլիսոփայութիւնը կը հիմնէ **ճշմարիտին, բարիին ու գեղեցիկին** վրայ, որոնք գոյացութեան հիմնական յատկութիւններն են: